ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
22 դեկտեմբերի 2017թ. N 61 Ն

1. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018Թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական տուրքերի և վճարների մասին" ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով.

Իջևանի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Իջևան համայնքի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև ,300քմ մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ:

բ/ սույն կետի ,,ա"ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ:

բբ/ 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ:

բգ/ 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

բդ/ 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ:

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ:

բ/ բացի օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն,

որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000դրամ:

4.Համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է 3000 դրամ:

բ. 26-ից մինչև 50քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է 4000 դրամ:

գ. 51-ից մինչև 100քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է 6000 դրամ:

դ. 101-ից մինչև 200քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է 10000 դրամ:

ե. 201-ից մինչև 500քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է 15000 դրամ:

զ. 501-ից և ավելի քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է 20000 դրամ:

5. Համայնքի տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր եռամսյակի համար

ա. մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է 3000 դրամ:

բ. 26-ից մինչև 50քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է 4000 դրամ:

գ. 51-ից մինչև 100քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է 6000 դրամ:

դ. 101-ից մինչև 200քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է 10000 դրամ:

ե. 201-ից մինչև 500քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է 15000 դրամ:

զ. 501-ից և ավելի քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է 20000 դրամ:

6. Համայնքի տարածքում

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ մեկ քառակուսի մետրի համար

7. Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է հիմնական շինությունների ներսում.

ա/ մինչև 26 քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2500 դրամ

բ/ 26-50 քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 3000 դրամ

գ/ 51-ից 100 քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 5000 դրամ

դ/ 101-ից 200 քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 8000 դրամ

ե/ 201-ից 500 քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 10000 դրամ

զ/ 501-ից և ավելին քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 15000 դրամ

8/ Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է ոչ հիմնական շինությունների ներսում

ա/ մինչև 26 քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 500 դրամ

բ/ 26-ից 50 քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 1000 դրամ

գ/ 51-ից 100 քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2000 դրամ

դ/ 101-ից 200 քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 4000 դրամ

ե/ 201-ից 500 քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 8000 դրամ

զ/ 501-ից և ավելին քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 12000 դրամ

9. Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և

տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք օրացույցային տարվա համար 200000 դրամ:

10. Խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և ծառայության օբյեկտերում վաճառքի թույլտվության համար տեղական տուրք օրացույցային տարվա համար սահմանվում է 60000 դրամ:

11. << համայնքների խորհրդանիշերը /զինանշան, անվանում և այլ/ որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար օրացույցային տարվա համար 100000 դրամ:

12. Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման թույլտվության օրացույցային տարվա համար 500000 դրամ:

13. Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացույցային տարվա համար

ա/3 հա-ից 5հա մակերես ունեցող գերեզմանատների համար 2500.000 դրամ

բ/ 5հա-ից մինչև 7հա մակերես ունեցող գերեզմանատների համար 5.000.000 դրամ

գ/ 7հա-ից մինչև 10հա մակերես ունեցող գերեզմանատների համար 7.000.000 դրամ

դ/ 10հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար 10.000.000 դրամ:

14. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրք սահմանվում է

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2000 դրամ

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 3000 դրամ

գ/ այլ արտաքին գովազդի համար 1500 դրամ

դ/ դատարկ գովազդային վահանակների համար 375դրամ

ե/ արտաքին գովազդ տարածող գովազդակիրի տեղաբաշխված և տարածված կազմակերպության գովազդը համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանել 150 դրամ

15. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները, խաղատները/ ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է

ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ,

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50000 դրամ,

գ/ բաղնիքների /սաունաների/ համար 200000 դրամ,

դ/խաղատների կազմակերպման համար 600000 դրամ,

ե/ շահումներով խաղերի կազմակերպման համար 350000 դրամ,

զ/վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ:

16.Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000 դրամ:

17.Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 դրամ:

18. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 2000 դրամ

19. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է տուրք հետևյալ դրույքաչափերով

ա/ յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 100 դրամ

բ/ յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ 500 դրամ

գ/ մեկ շաբաթվա համար 2800 դրամ

դ/ մեկ ամսվա համար 12000 դրամ

ե/ մեկ տարվա համար՝ 80000 դրամ

Ընդ որում մեկ ժամվա համար սահմանված տուրքի գանձում իրականացնելու դեպքում սահմանվում է միաժամանակ կայանման համար որպեսների հաշվարկման մեթոդ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ նշանակելու և հաստատելու /ճարտարապետահատակագծային առաջադրանք/, շինարարության ավարտը հաստատագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց տրխիատուցման վճար 15000 դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց՝ 10000 դրամ փոխհատուցման վճար:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար 25000դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ	ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ	ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ	ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ	ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ	ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
22 դեկտեմբերի 2017թ. N 62 Ն

2. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018Թ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի, 37-րդ հոդվածի և 60-րդ հոդվածի պահանջներով

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը:

ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Բնակելի ֆոնդի բնակվարձ և սեփականաշնորհված բնակարանների սպասարկման վարձ 1 քմ ընդհանուր մակերեսի համար՝ ամսական

ա/ չսեփականաշնորհված բնակելի ֆոնդ՝ 15 դրամ

բ/ սեփականաշնորհված բնակելի ֆոնդ՝ 10 դրամ:

2. Սեփականաշնորհված ոչ բնակելի տարածքների և այլ նպատակներով օգտագործվող բնակարանների ընդհանուր մակերեսի 1 քմ համար ամսական՝ 25 դրամ:

3. Բազմաբնակարան շենքերի համար պարտադիր իրականացման են ենթակա հետևյալ միջոցառումները և աշխատանքները՝

ա/ կենցաղային և կոշտ թափոնների հեռացում՝ առնվազն 3 օրը մեկ անգամ.

բ/ ընդհանուր օգտագործման տարածքների աղբամուղի ու աղբահավաք խցերի դեզինֆեկցիա /պայքար միջատների դեմ/ և դեռատիզացիայի /պայքար կրծողների դեմ/ իրականացում՝ առնվազն 3 ամիսը մեկ անգամ.

գ/ ընդհանուր օգտագործման և շենքի շինության սեփականատերերին սեփականության իրավունքով պատկանող տարածքների սանիտարական մաքրում՝ առնվազն 2 օրը մեկ անգամ

դ/ վերանորոգման աշխատանքների իրականացում, որոնց չիրականացումը կարող է կյանքին, առողջությանը, անձանց գույքին, շրջակա միջավայրին:

Վերանորոգված աշխատանքների իրականացման ժամկետները որոշվում են շենքի ընդհանուր օգտագործման գույքի տեխնիկական վիճակի տեսողական զննման,անհրաժեշտության դեպքում՝ մասնագիտական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների հիման վրա:

Ընդ որում, վթարային բնույթի այն վնասվածքներն ու անսարքությունները,որոնք կարող են ուղղակի վտանգ ներկայացնել, անհապաղ պետք է վերացվեն: Ուղղակի վտանգի փաստը պետք է հաստատվի տվյալ բնագավառում պետական լիազորված մարմնի կողմից.

ե/ բազմաբնակարան շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրությունները կատարվում են պարբերաբար, բայց ոչ ուշ. քան յուրաքանչյուր 10 տարին մեկ անգամ:

4. Բնակելի ֆոնդի շենքերի ոչ բնակելի տարածքների վարձավճարները սահմանել տարեկան 1 քմ ընդհանուր մակերեսի համար

ա/ առևտրային կազմակերպություններ՝	1200 դրամ
բ/ հասարակական և արտադրական կազմակերպություններ՝	1200 դրամ
գ/ բյուջետային կազմակերպություններ՝	840 դրամ

5. Համայնքի կողմից տնտեսվարող սուբյեկտներին մատուցվող աղբահանության ծառայության դիմաց գանձվող ամսական վարձավճարներ սահմանել՝

1. դղակներ և մթերային խանութներ	
մինչև 10քմ առևտրային մակերես	500 դրամ
10-20 քմ	1000 դրամ
20-40 քմ	2000 դրամ
40-70 քմ	3000 դրամ
70-100 քմ	4000 դրամ
100 քմ-ից ավելի	5000 դրամ
2. հագուստի խանութներ	
մինչև 30 քմ առևտրային մակերես	1000 դրամ

30-50 քմ	2000 դրամ
50-80 քմ	3000 դրամ
80-100 քմ	4000 դրամ
100 քմ-ից ավելի	5000 դրամ
գ/ կենցաղային, տնտեսական և արդյունաբերական ապրանքների խանութներ	
մինչև 50քմ առևտրային մակերես	3000 դրամ
50-100քմ	4000 դրամ
100քմ-ից ավելի	5000 դրամ
դ/ ավտոտեխսպասարկման կայաններ	
մինչև 20քմ	1000 դրամ
20-40քմ	2000 դրամ
40 քմ-ից ավելի	3000 դրամ
ե/ բենզալիցքավորման կայաններ	
1-2 լիցքավորման սարք	2000 դրամ
3 և ավելի լիցքավորման սարք	3000 դրամ
զ/ վարսավիրանոցներ, գեղեցկության սրահներ	
մինչև 20 քմ մակերես	1000 դրամ
20-50 քմ	2000 դրամ
50քմ և ավելի	3000 դրամ
է/ հանրային սննդի օբյեկտներ /ռեստորաններ, ճաշարաններ/	
մինչև 50 քմ մակերես	3000 դրամ
50-100 քմ	5000 դրամ
100 քմ-ից ավելի	8000 դրամ
էա/ սրճարաններ	
մինչև 10 սեղան	3000 դրամ
10-15 սեղան	5000 դրամ
15 և ավելի սեղան	8000 դրամ
ը/ դեղատներ	
մինչև 50 քմ մակերես	3000 դրամ
50 քմ-ից ավելի	4000 դրամ
թ/ գրասենյակներ, օֆիսներ	
մինչև 40 քմ	1000 դրամ
40-60 քմ	2000 դրամ
60-80 քմ	3000 դրամ
80-150 քմ	5000 դրամ
150 քմ և ավելի	12000 դրամ
ժ/ բուժհիմնարկներ, հիվանդանոցներ և կլինիկաներ	
մինչև 50 մահճակալ	8000 դրամ
50-100 մահճակալ	10000 դրամ
100-ից ավելի	12000 դրամ
ժա/ ատամնաբուժարաններ	
մինչև 2 ատամնարկման աթոռ	2000 դրամ
2-4 ատամնարկման աթոռ	3000 դրամ
4 և ավելի ատամնարկման աթոռ	4000 դրամ
ի/ հանրակրթական դպրոցներ, վարժարաններ, մարզադպրոցներ, երաժշտական դպրոցներ	
1 անձի համար	20 դրամ
լ/ նախադպրոցական ուսումնական հաստատություններ՝ 1 անձի համար	40 դրամ
խ/ համալսարաններ, քոլեջներ, ինստիտուտներ՝ 1 անձի համար	30 դրամ
ծ/ հյուրանոցներ	
մինչև 10 սենյակ /համար/	3000դրամ
10-30 սենյակ /համար/	5000 դրամ
30 և ավելի սենյակ /համար/	8000 դրամ
կ/ բանկեր	
մինչև 50 քմ մակերես	3000 դրամ
50-100 քմ	4000 դրամ
100-200 քմ	5000 դրամ
200 քմ և ավելի	8000 դրամ
հ/թանգարաններ, պատկերասրահներ, ցուցահանդեսներ	2000 դրամ
ձ/բնակչության կենցաղսպասարկման ծառայություններ /արհեստանոցներ, լուսանկարչական, համակարգչային և	

մինչև 20 քմ մակերես	1000 դրամ
20-50 քմ	2000 դրամ
50-80 քմ	3000 դրամ
80 քմ-ից ավելի	5000 դրամ
ղ/ ծաղկի վաճառքի խանութներ և սրահներ	
մինչև 20 քմ մակերես	1000 դրամ
20-50 քմ	2000 դրամ
50 քմ-ից ավելի	3000 դրամ
ճ/ առևտրի ժամանակավոր և շարժական կետեր	1000 դրամ
6. ,,Իջևանի միջնակարգ երաժշտական դպրոց'' ՀՈԱԿ և ,,Ավանդույթ'' ՀՈԱԿ սովորողների ուսման վճար սահմանել ամսական	
ա/ 1-7 դասարանների համար ներառյալ	5000դրամ
Նույն ընտանիքի 2-րդ և ավելի երեխաների համար	2500-ական դրամ
բ/ 8-10 դասարանների համար ներառյալ	5000դրամ
7. Մանկապարտեզ հաճախող երեխաների սպասարկման վճար սահմանել ամսական	5000դրամ
8. Արվեստի դպրոց հաճախող սովորողների ուսման	
ա/ պարարվեստի բաժնի վճարը սահմանել ամսական	5000դրամ
Նույն ընտանիքի 2-րդ և ավելի երեխաների համար	2500-ական դրամ
բ/ գեղարվեստի բաժնի վճարը՝	3000 դրամ
9. Կենցաղային աղբի տեղափոխման վճար սահմանել՝	
ա/ բնակչությունից 1 շնչի հաշվով ամսական	100 դրամ
բ/ կազմակերպություններից աղբի տեղափոխման վճար սահմանել՝ 1 խմ համար	3000 դրամ
10. Մշակույթի տան դահլիճի վարձակալման վճար սահմանել 1 ժամվա համար	20000 դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ	ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ	ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ	ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ	ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ	ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
22 դեկտեմբերի 2017թ. N 63 Ն

3. ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՉԱՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի" 76 հոդվածի համաձայն համայնքի վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքային սեփականությունը հանդիսացող հողամասերը վարձակալության են տրամադրում համայնքի ղեկավարները՝ մրցութային կարգով: Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16 -րդ հոդվածի 20-րդ կետի, վարձակալության տրամադրվող վարձավճարի չափերը և պայմանները հաստատում է համայնքի ավագանին:

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

Համայնքի վարչական սահմաններում վարձակալությամբ օգտագործման տրամադրվող հողատարածքների մեկնարկային տարեկան վարձավճար սահմանել 1 քմ մակերեսի համար 15 դրամի չափով II գոտում, 20 դրամի չափով I գոտում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ	ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ	ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ	ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ	ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ	ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
22 դեկտեմբերի 2017թ. N 64 Ն

4. ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ „Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի համաձայն Իջևանի համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող տարածքներին աճուրդային վաճառք կազմակերպելու համար անհրաժեշտ է սահմանել մեկնարկային գին, որի համար

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

Ոչ բնակելի մակերեսների աճուրդային վաճառքի մեկնարկային գին հաստատել 1 քմ ընդհանուր մակերեսի համար 10000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ	ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ	ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ	ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ	ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ	ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
22 դեկտեմբերի 2017թ. N 65

5.ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ, ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ՏԵՂԵՐ ԳՐԱՎԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԻՉՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻԱՆՎԱԳ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքը հարուստ է մարզական ավանդույթներով, ունեցել է բազմաթիվ մրցանակակիրներ և այսօր քաղաքի տարբեր մարզական խմբակներում ընդգրկված են շնորհաշատ և մարզական լուրջ ձեռքբերումների ընդունակ երեխաներ: Սպորտային ավանդույթները արմատավորելու, ՀՀ, Եվրոպայի և աշխարհի առաջնություններում մրցանակային տեղեր գրաված մարզիկներին խրախուսելու նպատակով համայնքի ավագանին նպատակահարմար է գտնում սահմանել միանվագ դրամական պարգևներ:

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը հանրապետական, միջազգային պաշտոնական, եվրոպայի և աշխարհի առաջնություններում մրցանակային տեղեր գրաված մարզիկների համար սահմանելու հետևյալ միանվագ դրամական պարգևները.

Մրցանակային տեղեր	ՀՀ առաջնություն և միջազգային պաշտոնական մրցաշարեր	Եվրոպայի առաջնություն		Աշխարհի առաջնություն	
	մրցանակային տեղ գրավելու համար	մրցանակային տեղ գրավելու համար	մասնակցության համար	մրցանակային տեղ գրավելու համար	մասնակցության համար
ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ					
III	10 հազար դր.	20 հազար դր.	20 հազար դր.	30 հազար դր.	30 հազար դր.
II	20 հազար դր.	30 հազար դր.		40 հազար դր.	
I	30 հազար դր.	40 հազար դր.		50 հազար դր.	
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ					
III	20 հազար դր.	30 հազար դր.	30 հազար դր.	40 հազար դր.	40 հազար դր.
II	30 հազար դր.	40 հազար դր.		50 հազար դր.	
I	40 հազար դր.	50 հազար դր.		60 հազար դր.	
ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ					
III	30 հազար դր.	40 հազար դր.	40 հազար դր.	50 հազար դր.	50 հազար դր.
II	40 հազար դր.	50 հազար դր.		60 հազար դր.	
I	50 հազար դր.	70 հազար դր.		80 հազար դր.	

2.Հանրապետական, միջազգային պաշտոնական,եվրոպայի և աշխարհի երիտասարդների առաջնություններում մրցանակային տեղեր գրաված մարզիկների մարզիչների համար սահմանել դրամական պարգև համապատասխան մրցանակային տեղ գրաված մարզիկի գումարի 40% չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀՐԱՄ ՊԱՊՈՒՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
22 դեկտեմբերի 2017թ. N 66 Ա

6.ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ, ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՈՒ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին"ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի և առաջնորդվելով համայնքապետարանի կանոնադրությամբ համայնքի ղեկավարը ավագանու հավանությանն է ներկայացնում համայնքապետարանի, ենթակա բյուջետային հիմնարկների ու ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը:

Հաշվի առնելով քննարկման արդյունքները

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը հաստատել Իջևանի համայնքապետարանի, ենթակա բյուջետային հիմնարկների ու ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, թվաքանակը ու պաշտոնային դրույքաչափերը /կցվում են հավելված 1 և 2/:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ	ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ	ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ	ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ	ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ	ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Հավելված 1
Իջևանի քաղաքային համայնքի ավագանու 20.12.2017թ թիվ 66Ա որոշման

ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատակազմը կազմված է 6 բաժիններից՝

Առանձնացված ստորաբաժանում

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Իջևանի տարածքային բաժին

Կառուցվածքային ստորաբաժանումներ

2. Ֆինանսական բաժին
3. Տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժին
4. Առևտրի, տրանսպորտի, սպասարկումների և կապի բաժին
5. Ներքին աուդիտի բաժին
6. Կրթության, մշակույթի և սպորտի բաժին

ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2018թ

Աշխատակիցների թվաքանակը՝ 46

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/
	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ		
1	Համայնքի ղեկավար	1	440000
	ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	355000
3	Համայնքի ղեկավարի օգնական	1	300000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
4	Աշխատակազմի քարտուղար	1	330000
	Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում		
	ՔԿԱԳ Իջևանի տարածքային բաժին		
5	Բաժնի պետ	1	256600
6	1-ին կարգի մասնագետ	2	133600
	Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներ		
	Ֆինանսական բաժին		
7	Բաժնի պետ	1	280000
8	Գլխավոր մասնագետ	1	158227
9	Առաջատար մասնագետ	2	124775
10	1-ին կարգի մասնագետ	1	100680
	Տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժին		
11	Բաժնի պետ	1	280000
12	Գլխավոր մասնագետ –ճարտարապետ	1	158227
13	Առաջատար մասնագետ	2	124775
14	1-ին կարգի մասնագետ	1	100680
	Աշխատակազմի մասնագետներ		
15	Գլխավոր մասնագետ	6	158227
16	Առաջատար մասնագետ	3	124775
17	1-ին կարգի մասնագետ	2	100680
	Առևտրի, տրանսպորտի, սպասարկումների և կապի բաժին		
18	Բաժնի պետ	1	280000
19	Գլխավոր մասնագետ	1	158227
20	Առաջատար մասնագետ	1	124775
21	2-րդ կարգի մասնագետ	2	83358
	Կրթության, մշակույթի և սպորտի բաժին		
22	Բաժնի պետ	1	280000
23	Գլխավոր մասնագետ	1	158227
24	Առաջատար մասնագետ	1	124775
25	1-ին կարգի մասնագետ	2	100680
	Ներքին աուդիտի բաժին		
26	Բաժնի պետ	1	280000
27	Առաջատար մասնագետ	1	124775
	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐ		
28	Իրավաբան	1	150000
29	Քարտուղարուհի	1	115000
30	Խմբագիր	1	92550
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
31	Վարորդ	1	255000
32	Պարետ	0,5	72751
33	Էլեկտրիկ	1	72751
	Ընդամենը	45,5	7707668

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
22 դեկտեմբերի 2017թ. N 67

7. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի 2017թ բյուջեի եռամսյակային համամասնությունների պահպանման նպատակով անհրաժեշտություն է առաջացել վարչական բյուջեի ծախսային և եկամտային մասը ավելացնել 4722,0 հազ դրամ /1100,0 հազ դրամ հողի վարձակալության, 3622,0 հազ դրամ ծնողական վճարների հաշվին/ և կատարել 9844,0 հազ դրամի նախատեսված ծախսերի հոդվածային վերաբաշխումներ:

Ելնելով վերոնշյալից և ղեկավարվելով ,,Բյուջետային համակարգի մասին,, ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1. 2017թ բյուջեի եկամտային և ծախսային մասը ավելացնել 4722,0 հազ դրամ, որից 1100,0 հազ դրամ 22.52 բաժնի հողի վարձակալության 900375121077 հաշվին, 3622,0 հազ դրամ 46.7 բաժնի ծնողական վճարներ 900375121550 հաշվին: Բյուջեի ծախսային մասում վերոնշյալ գումարից 1100,0 հազ դրամ հատկացնել 10.7.1 բաժնի 4729 հոդվածին. 1247,0 հազ դրամ 9.1.1 բաժնի 4511 հոդվածին. այդ թվում թիվ 1 մանկապարտեզին 564,0 հազ դրամ. թիվ 5 մանկապարտեզին 333,0 հազ դրամ, թիվ 8 մանկապարտեզին 350,0 հազ դրամ, 9.5.1 բաժնի 4511 հոդվածին 2375,0 հազ դրամ, որից 280,0 հազ դրամ ,,Արվեստի դպրոց,, ՀՈԱԿ-ին, 1560,0 հազ դրամ ,,Իջևանի երաժշտական միջնակարգ դպրոց,, ՀՈԱԿ-ին, 535,0 հազ դրամ ,,Ավանդույթ,, ՀՈԱԿ-ին:

2. Վարչական բյուջեի ծախսային մասում կատարել 9844,0 հազ դրամի հոդվածային վերաբաշխումներ, այդ թվում Իջևանի համայնքապետարանի պահպանման ծախսերի 1.1.1 բաժնի 4111 հոդվածից կրճատել 2379,0 հազ դրամ, 4212 հոդվածից 520,0 հազ դրամ, 4215 հոդվածից 34,0 հազ դրամ, 4221 հոդվածից 53,0 հազ դրամ, 4234 հոդվածից 18,0 հազ դրամ, 4252 հոդվածից 270,0 հազ դրամ, 4261 հոդվածից 352,0 հազ դրամ, 4264 հոդվածից 968,0 հազ դրամ, 9.1.5 բաժնի 4511 հոդվածով թիվ 1 մանկապարտեզի պահպանման ծախսերից 342,0 հազ դրամ, թիվ 5 մանկապարտեզից 107,0 հազ դրամ, թիվ 8 մանկապարտեզ պահպանման ծախսերից 78,0 հազ դրամ 8.2.2 բաժնի 4511 հոդվածից Թանգարանի պահպանման ծախսերից 177,0 հազ դրամ, 8.2.4 բաժնի 4638 հոդվածով ,,Վերնատան,, պահպանման ծախսերից 184,0 հազ դրամ, Արվեստի դպրոցից 250,0 հազ դրամ, ,,Իջևանի երաժշտական միջնակարգ դպրոց,,ՀՈԱԿ-ից 1156,0 հազ դրամ,,,Ավանդույթ,, ՀՈԱԿ -ի պահպանման ծախսերից 274,0 հազ դրամ, 6.3.1 բաժնի 4213 հոդվածից /ջրամատակարարում/ 277,0 հազ դրամ, 4.5.1 բաժնի 4251 հոդվածից /բարեկարգում/ 463,0 հազ դրամ, ,,Իջևանի քաղաքայինբ կոմունալ տնտեսություն,, բ/հ պահպանման ծախսերի 5.1.1 բաժնի 4111 հոդվածից 1892,0 հազ դրամ, 4221 հոդվածից 50,0 հազ դրամ:

Վերոնշյալ ընդամենը 9844,0 հազ դրամից 1900,0 հազ դրամ հատկացնել 10.7.1 բաժնի 4729 հոդվածին, 841.0 հազ դրամ հատկացնել մարզադպրոցի պահպանման ծախսերին, 1100,0 հազ դրամ հատկացնել 8.2.3 բաժնի 4511 հոդվածով մշակույթի տան պահպանման ծախսերի1.1.1 բաժնի 4269 հոդվածով Իջևանի համայնքապետարանի պահպանման ծախսերին 1269,0 հազ դրամ, 4214 հոդվածին 18,0 հազ դրամ, 500,0 հազ դրամ 4819 հոդվածին, 238,0 հազ դրամ հատկացնել 6.4.1 բաժնի 4212 հոդվածին /էլէներգիա/ 2469,0 հազ դրամ հատկացնել ,,Իջևանի քաղաքային կոմունալ տնտեսություն,, բ/հ 5.1.1 բաժնի 4264 հոդվածին, 1509,0 հազ դրամ 8.2.4 բաժնի 4239 հոդվածին /մասսայական միջոցառման/ հաշվին:

3. Հաստատել 2017թ ճշգրտված բյուջեն 543302,7 դրամ եկամուտների 543386,5 հազ դրամ վարչական բյուջեի ընդամենը 543667,0 հազ դրամ ծախսերի մասով:

Բյուջեի դիֆիցիտը կազմում է 364,7 հազ դրամ, որի ծածկմանն է ուղղված 364,7 հազ դրամ տարեսկզբի ազատ մնացորդը, այդ թվում 83,8 հազ դրամ վարչական, 280,9 հազ դրամ ֆոնդային բյուջեի մասով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ԿԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ